

<http://www.aysor.am/am/news/2011/06/29/tamara-babayan/>

Թ.Բաբայան.«Վերականգնվող Էներգետիկայի համար ունենք ռեսուրսներ»

Վերականգնվող էներգետիկայի իրավիճակը և հեռանկարները Հայաստանում թեմայի շուրջ այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսեցին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը և հիմնադրամի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Արայիկ Մարջանյանը:

Թամարա Բաբայանի փոխանցմամբ, վերականգնվող էներգետիկայի տեսանկյունից Հայաստանը տարածաշրջանի երկրների ետ համեմատ բավականին լավ վիճակում է:

«Ոլորտի զարգացման համար ստեղծված է բարենպաստ օրենսդրական դաշտ և տարվում է խրախուսող քաղաքականություն: Ունենք նաև համապատասխան ռեսուրսներ: Վստահ կարող ենք ասել, որ վերականգնվող էներգետիկայի համար հարուստ ենք մեծ ներուժով», - նշեց Թամարա Բաբայանը և հավելեց, որ ոլորտում անելիքներ դեռ շատ կան:

Հիմնադրամի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Արայիկ Մարջանյանի գնահատմամբ՝ վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանն ունի զարգացման և արդյունավետության մեծացման զգալի պոտենցիալ:

«Մինչև վերջերս Հայաստանը տարածաշրջանում բացարձակ առաջատար էր: Ներկայումս որոշ առումներով մի փոքր զիջում ենք Թուրքիային: Սակայն փոքր ՀԷԿ-երի առումով առաջատար ենք», - նշեց Արայիկ Մարջանյանը:

Բանախոսները նաև տեղեկացրեցին, որ առաջիկայում Հայաստանի տարբեր մարզերում կազմակերպվելու են հանդիպումներ շահագրգիռ կառույցների և պոտենցիալ ներդրողների հետ՝ ՎԷ տեսանկյունից տվյալ մարզի պոտենցիալը ներկայացնելու նպատակով:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը մշակել է ֆինանսավորման երկու մեխանիզմ՝ էներգախնայողության-ջեռուցման և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի համար: ՎԷ-ի ֆինանսավորման փաթեթը կազմված է ֆինանսական երեք աղբյուրներից՝ հիմնադրամ (5 մլն ԱՄՆ դոլար), ՎՋԵԲ (7 մլն ԱՄՆ դոլար) և «Կասկադ կրեդիտ հոլդինգ» (3 մլն ԱՄՆ դոլար): Վերջինիս

Իրավահաջորդն է «Ամերիաբանկ»-ը, որը պատասխանատու է ֆինանսական ողջ
փաթեթի համար:

29.06.2011, 12:05

Aysor.am